ԵՐԴՐՈՒՄՑԵՐ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՀՊԱՆՎՈՂ
ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՈԼՈՐՏՈՒՄ.
ԳԵՐԿԱՑ ԵՎ ԱՊԱԳԱՑ
INVESTMENTS
IN PROTECTED AREAS OF ARMENIA:
PRESENT AND FUTURE



www.panda.org/armenia



© 2009, ԲՀՀ Հայաստան
Պատրաստվել է Բնության համաշխարհային հիմնադրամի (ԲՀՀ/WWF) հայաստանյան մասնաճյուղի կողմից: Հրատարակության պատրաստումը և տպագրությունն իրականացվել է MAVA Fondation Pour La Nature հիմնադրամի ֆինանսական աջակցությամբ «Պահպանվող տարածքները կենդանի մոլորակի համար – Կովկասի էկոտարածաշրջան» ծրագրի շրջանակում:

© 2009, WWF Armenia
Developed by WWF Armenia.
Development and publication was financed by MAVA Fondation Pour La Nature in the framework of the project "Protected Areas for a Living Planet – Caucasus Ecoregion".

Լուսանկարներ. © ԲՀՀ Հայաստան / Ա.Մալխասյան, Կ.Մանվելյան, Ա.Խոյեցյան, Ս.Գալստյան, Ա.Մարտիրոսյան, Մ.Թովմասյան, Ա.Սանթրոսյան
Photos: © WWF Armenia / A.Malkhasyan, K.Manvelyan, A.Khoyetsyan, S.Galstyan, A.Martirosyan, M.Tovmasyan, A.Santrosyan

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ
CONTENTS

4 ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ
INTRODUCTION

9 ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲՆՈՒԹՅԱՆ ՀԱՏՈՒԿ ՊԱՀՊԱՆՎՈՂ ՏԱՐԱԾՔՆԵՐԸ
SPECIALLY PROTECTED NATURE AREAS OF ARMENIA

13 ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՀՊԱՆՎՈՂ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՈԼՈՐՏՈՒՄ
INVESTMENTS IN PROTECTED AREAS OF ARMENIA

55 ԲԻՉՆԵՍԻ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՊԱՀՊԱՆՎՈՂ ՏԱՐԱԾՔՆԵՐԻՆ
ԲՀՄ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿԻ ՀԵՏ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՈՎ
BUSINESS CONTRIBUTION TO PROTECTED AREAS
THROUGH COOPERATION WITH WWF ARMENIA

61 ՀԵՏԱԳԱ ԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ԱԳՏՐԱԺԵՏՈՒԹՅՈՒՆ
ROOM FOR INVESTMENTS

ԱՌԱՋԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Հայաստանը լեռնային երկիր է (29740 քառ. կմ), որը բնութագրվում է բույսերի և կենդանիների տեսակների, ինչպես նաև լանդշաֆտների և բուսականության տիպերի հարուստ բազմազանությամբ: Այն պայմանավորված է երկրի յուրահատուկ աշխարհագրական դիրքով, կլիմայական պայմաններով, ռելիեֆով և այլ գործոններով: Հայաստանի փոքր տարածքում աճում են բարձրակարգ ծաղկավոր բույսերի ավելի քան 3500 տեսակներ (Կովկասի ֆլորայի կեսից ավելին), իսկ կենդանիների թիվն ավելի է քան 17500 տեսակներ՝ այդ թվում 536 ողնաշարավորներ: Այս հարուստ կենսաբազմազանություն մեջ շատ են էնդեմները, ռելիկտ և հազվագյուտ տեսակները: Դրանցից ֆլորայի 387 և ֆաունայի 99 տեսակներ գրանցված են Հայաստանի Կարմիր գրքում (վերահրատարակվող Կարմիր գրքում դրանց թիվն ավելի շատ է): Մի շարք տեսակներ ընդգրկված են Բեռնի կոնվենցիայի («Կոնվենցիա Եվրոպայի վայրի բնության և բնական միջավայրի պահպանության մասին») և CITES-ի կոնվենցիայի («Կոնվենցիա անհետացման վտանգի տակ գտնվող վայրի ֆաունայի և ֆլորայի միջազգային արևտրի մասին») հավելվածներում: Բացի այդ, Հայաստանի ֆաունայի 37 տեսակներ գրանցվել են ԲՊՄՄ/IUCN միջազգային Կարմիր ցուցակում:

1993թ-ին Հայաստանի Հանրապետությունը (ՀՀ) վավերացրել է ՄԱԿ-ի «Կենսաբազմազանության մասին կոնվենցիա»-ն (ԿԲԿ) և պարտավորվել իրականացնել դրա դրույթները: Կոնվենցիայի հոդված 8-ի համաձայն (In-situ պահպանություն) կենսաբազմազանության պահպանությունը բնական միջավայրում համարվում է կարևոր ռազմավարական գերակայություն: Այս տեսակետից պահպանվող տարածքները (ՊՏ) ունեն չափազանց կարևոր նշանակություն, քանի որ ապահովում են էնդեմ, ռելիկտ, հազվագյուտ և այլ տեսակների պահպանությունն իրենց բնական միջավայրում: Որպես ԿԲԿ-ի կողմ երկիր, Հայաստանը պարտավորվել է նաև իրականացնել կոնվենցիայի «Պահանվող տարածքների վերաբերյալ աշխատանքների ծրագիր»-ը (2004թ.):

Կոնվենցիայի վավերացումից հետո Հայաստանում մշակվել և ընդունվել են մի շարք փաստաթղթեր, որոնք հիմք են հանդիսանում կենսաբազմազանության պահպանության և մասնավորապես ՊՏ-ների զարգացման համար: Դրանցից են «Հայաստանի կենսաբազմազանություն» ԿԲԿ-ի առաջին ազգային զեկույցը (1999թ.), «Հայաստանի կենսաբազմազանության ռազմավարություն և գործողությունների ծրագիր»-ը (2002թ.), «Հայաստանի բնության հատուկ պահպանվող տարածքների զարգացման ռազմավարություն և գործողությունների ազգային ծրագիր»-ը (2002թ.) և այլն: 2006թ-ին ընդունվել է նոր օրենք բնության հատուկ պահպանվող տարածքների (ԲՀՊՏ) մասին: Ներկայումս մշակվում և ընդունվում են օրենքից բխող ենթաօրենսդրական ակտեր:

Հայաստանում ԲՀՊՏ-ների համակարգի ստեղծումը սկսվել է 1958 թ-ին, երբ հիմնադրվել են առաջին ՊՏ-ները (3 արգելոցներ և 6 արգելավայրեր): Այնուհետև համակարգը զարգանալով՝ ներկայումս ընդգրկում է 3 պետական արգելոցներ, 4 ազգային պարկեր, 26 արգելավայրեր և 230 բնության հուշարձաններ:

Այս հրատարակության նպատակն է ներկայացնել հասանելի տեղեկությունները Հայաստանում ԲՀՊՏ-ների համար կատարվող ներդրումների վերաբերյալ՝ այդ թվում պետական, միջազգային և մասնավոր ֆինանսավորումը, ինչպես նաև վերջին տարիների ընթացքում իրականացված և ներկայումս իրականացվող հիմնական գործողությունները: Այն ցույց է տալիս ներդրումների դերը ԲՀՊՏ-ների զարգացման գործում: Տեղեկությունները ներկայացվում են ըստ ներդրում կատարող գործակալությունների և կազմակերպությունների: Հրատարակությունում ներկայացվում են նաև Հայաստանի ԲՀՊՏ-ների զարգացման հեռանկարները և այն կարիքները, որոնց համար անհրաժեշտ են հետագա ներդրումներ՝ ի նպաստ Հայաստանում ԲՀՊՏ-ների զարգացմանը և կենսաբազմազանության ավելի արդյունավետ պահպանությանը:

INTRODUCTION

Armenia is a mountainous country (territory 29740 sq. km) with rich diversity of flora and fauna species, landscapes and vegetations, which is conditioned by unique geographical location of the country, climatic conditions, relief and other factors. On the small territory of Armenia there are more than 3500 species of high vascular plants (more than the half of the Caucasus flora) and more than 17500 species of animals, including 536 vertebrates. The biodiversity of Armenia includes many endemic, relict and rare species. Many of them are registered in the Red Data Book of Armenia, including 387 species of flora and 99 species of fauna (the updated Red Data Book to be published soon will include more species). A number of species are included in the appendices of the Bern Convention on the Conservation of European Wildlife and Natural Habitats and CITES – the Convention on International Trade in Endangered Species of Wild Fauna and Flora. In addition, 37 species of Armenian fauna are included in the IUCN Red List.

In 1993 the Republic of Armenia (RA) ratified the UN Convention on Biological Diversity (CBD) with the commitment to implement its provisions. According to Article 8 of the CBD (In-situ Conservation) the biodiversity protection in natural habitats is considered as important strategic priority. From this perspective protected areas (PAs) have exceptional significance as they ensure protection of endemic, relict, rare and other species in their natural habitats. As a party of the Convention Armenia also committed itself to implementation of the Programme of Work on Protected Areas (2004) of the CBD.

After the ratification of the Convention a number of documents were developed and adopted in Armenia to serve as a basis for biodiversity protection and particularly development of PAs. They include the CBD First National Report "Biodiversity of Armenia" (1999), "Biodiversity Strategy and National Action Plan for Armenia" (1999), "Strategy on Developing Specially Protected Areas and National Action Plan" (2002) and others. In 2006 the new Law on Specially Protected Nature Areas was adopted. The process of development and approval of by-laws is ongoing.

The establishment of a system of specially protected nature areas (SPNA) in Armenia started in 1958, when first SPNAs were established (3 reserves and 6 sanctuaries). Since then, the system has been developing and at present there are 3 state reserves, 4 national parks, 26 sanctuaries and 230 natural monuments in Armenia.

The aim of this publication is to present available information on investments in the field of SPNAs in Armenia, including public, international and corporate funding. It also shows ongoing activities and those implemented in this field during the recent years. The intention is to highlight the role of investments in the development of SPNAs. The information is arranged by investing agencies and organizations. The publication presents also the development perspectives for SPNAs of Armenia and needs to be addressed by future investments as contribution to development of SPNAs and more effective protection of biodiversity in Armenia.



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲՑՈՒԹՅԱՆ ՀԱՏՈՒԿ ՊԱՀՊԱՆՎՈՂ ՏԱՐԱԾՔՆԵՐԸ

SPECIALLY PROTECTED NATURE AREAS OF ARMENIA

9

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲՑՈՒԹՅԱՆ ՀԱՏՈՒԿ ՊԱՀՊԱՆՎՈՂ ՏԱՐԱԾՔՆԵՐԸ

Հայաստանի ԲՀՊՏ-ների համակարգը ներառում է 3 պետական արգելոցներ, 4 ազգային պարկեր, 26 պետական արգելավայրեր և 230 բնության հուշարձաններ: Արգելոցների, ազգային պարկերի և արգելավայրերի ընդհանուր տարածքը կազմում է մոտ 385.000 հա, որը կազմում է Հայաստանի տարածքի մոտ 13%: Քարտեզի վրա ներկայացված են Հայաստանի գոյություն ունեցող ԲՀՊՏ-ները՝ ստեղծման տարեթվերով և տարածքներով, ինչպես նաև պլանավորված ԲՀՊՏ-ները:

Պետական արգելոցներ և ազգային պարկեր

1. «Խոսրովի անտառ» պետական արգելոց (1958; 23878 հա)
2. «Էրեբունի» պետական արգելոց (1981; 89 հա)
3. «Շիկահող» պետական արգելոց (1958; 12137 հա)
4. «Դիլիջան» ազգային պարկ (2002; 33765 հա)
5. «Սևան» ազգային պարկ (1978; 147456 հա)
6. «Արփի լիճ» ազգային պարկ (2009; մոտ 25000 հա)
7. «Արևիկ» ազգային պարկ (2009; 34401 հա)

Պետական արգելավայրեր

8. «Հանքավանի ջրաբանական» (1981; 9350 հա)
9. «Արզական - Մեղրաձորի» (1971; 13532 հա)
10. «Բանքսի սոճու» (1959; 4 հա)
11. «Մարգահովտի» (1971; 3368 հա)
12. «Իջևանի» (1971; 5908 հա)
13. «Արջատխլենու» (1958; 40 հա)
14. «Գանձաքարի - Վերին Աղդանի» (1971; 6813 հա)
15. «Ախնաբաթի կենու պուրակ» (1959; 25 հա)
16. «Գետիկի» (1971; 5728 հա)
17. «Գիհու նոսրանտառային» (1958; 3312 հա)
18. «Արագածի ալպյան» (1959; 300 հա)
19. «Գոռավանի ավազուտներ» (1959; 95 հա)
20. «Եղեգիսի» (1971; 4200 հա)
21. «Հերհերի նոսրանտառային» (1958; 6139 հա)
22. «Ջերմուկի ջրաբանական» (1981; 18000 հա)
23. «Ջերմուկի անտառային» (1958; 3865 հա)
24. «Սև լիճ» (2001; 240 հա)
25. «Գորիսի» (1972; 1850 հա)
26. «Բողաքարի» (1989; 2728 հա)
27. «Սոսու պուրակ» (1958; 64 հա)
28. «Արարատի որդան կարմիր» (1987; 219 հա)
29. «Խոր Վիրապ» (2007; 50 հա)
30. «Գիլան» (2007; 118 հա)
31. «Գյուլագարակի» (1958; 2576 հա)
32. «Կովկասյան մրտավարդի» (1959; 1000 հա)
33. «Ջանգեզուր» (2009; 17368 հա)

Պլանավորված ԲՀՊՏ-ներ

34. «Ջերմուկ» ազգային պարկ
35. «Որոտան» արգելավայր
36. «Գնիշիկ» արգելավայր
37. «Կիրանց» արգելավայր

SPECIALLY PROTECTED NATURE AREAS OF ARMENIA

In Armenia there are 3 state reserves, 4 national parks, 26 state sanctuaries and 230 natural monuments. The total territory of the reserves, national parks and sanctuaries is about 385,000 ha, which makes about 13% of the territory of Armenia. The map shows existing SPNAs with years of establishment and territories as well as planned SPNAs.

State Reserves and National Parks

1. Khosrov Forest State Reserve (1958; 23,878 ha)
2. Erebuni State Reserve (1981; 89 ha)
3. Shikahogh State Reserve (1958; 12,137 ha)
4. Dilijan National Park (2002; 33,765 ha)
5. Sevan National Park (1978; 147,456 ha)
6. Arpi Lake National Park (2009; about 25,000 ha)
7. Arevik National Park (2009; 34,401 ha)

State Sanctuaries (with year of establishment and area)

8. Hanqavan Hydrological (1981; 9,350 ha)
9. Arzakan-Meghradzor (1971; 13,532 ha)
10. Bank's Pine (1959; 4 ha)
11. Margahovit (1971; 3,368 ha)
12. Ijevan (1971; 5,908 ha)
13. Arjatkhleni Hazel-nut (1958; 40 ha)
14. Gandzakar – Upper Aghdan (1971; 6,813 ha)
15. Akhnabat Yew Grove (1959; 25 ha)
16. Getik (1971; 5,728 ha)
17. Juniper Open Woodland (1958; 3,312 ha)
18. Aragats Alpine (1959; 300 ha)
19. Goravan Sands (1959; 95 ha)
20. Yeghegis (1971; 4,200 ha)
21. Herher Open Woodlands (1958; 6,139 ha)
22. Jermuk Hydrological (1981; 18,000 ha)
23. Jermuk Forest (1958; 3,865 ha)
24. Sev Lich (2001; 240 ha)
25. Goris (1972; 1,850 ha)
26. Boghaqar (1989; 2,728 ha)
27. Plane Grove (1958; 64 ha)
28. Ararat Vordan Karmir (1987; 219 ha)
29. Khor Virap (2007; 50 ha)
30. Gilan (2007; 118 ha)
31. Gyulagarak (1958; 2,576 ha)
32. Caucasian Rose-bay (1959; 1,000 ha)
33. Zangezur (2009; 17,368 ha)

Planned Protected Areas

34. Jermuk National Park
35. Vorotan Sanctuary
36. Gnishik Sanctuary
37. Kirants Sanctuary





ԵՐԴՐՈՒՄԱՑԵՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՀՊԱՆՎՈՂ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՈԼՈՐՏՈՒՄ

INVESTMENTS IN PROTECTED AREAS OF ARMENIA

13



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲՑՈՒԹՅԱՆ ՀԱՏՈՒԿ ՊԱՀՊԱՆՎՈՂ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ

ԲՀՊՏ-ները որպես ՄԱԿ-ի ԿԲԿ-ով նախատեսված կենսաբազմազանության պահպանության հիմնական միջոցներից մեկը, միշտ եղել են ՀՀ կառավարության ուշադրության կենտրոնում: ՀՀ բնապահպանության նախարարությունը (ԲՆ) հանդիսանում է լիազորված պետական մարմին ԲՀՊՏ-ների կառավարման, պահպանության և օգտագործման ոլորտում:

Վերջին տարիների ընթացքում պետական ֆինանսավորմամբ իրականացվել են բազմաթիվ գործողություններ: Հատկանշական է, որ պետական ֆինանսավորումն աստիճանաբար ավելանում է: Պետք է նշել, որ 2000 թ-ից հետո ԲՀՊՏ-ների ծախսերի ֆինանսավորումն ազգային մակարդակով աճել է ավելի քան 5 անգամ:

Վերջին տարիների ընթացքում պետական ֆինանսավորմամբ իրականացված և ներկայումս իրականացվող հիմնական գործողություններից են.

- Նոր ԲՀՊՏ-ների ստեղծում. «Խոր Վիրապ» արգելավայր (2007թ.), «Գիլան» արգելավայր (2007թ.), «Արփի լիճ» և «Արևիկ» ազգային պարկեր (2009թ.), «Ջանգեզուր» արգելավայր (2009թ.)
- Նոր ԲՀՊՏ-ների ստեղծման կառավարության որոշումների նախագծերի մշակում. «Ջերմուկ» և «Գնիշիկ» ազգային պարկեր, «Կիրանց» և «Որոտան» պետական արգելավայրեր
- ԲՀՊՏ-ների ոլորտում օրենսդրական բարեփոխումներ. ԲՀՊՏ-ների մասին օրենքի ընդունում (2006թ.) և դրանից բխող ենթաօրենսդրական ակտերի մշակում և ընդունում
- ԲՀՊՏ-ների սահմանների ճշտում և քարտեզագրում
- Բնության հուշարձանների ցանկի հաստատում (2008թ.), ՀՀ բնության հուշարձանների հաստատված ցանկի համալրման, պահպանման գոտու տարածքների ճշտման և հողամասերի առանձնացման 2010-2012թթ. ծրագրի հաստատում
- ԲՀՊՏ-ների կառավարման պլանների մշակում և հաստատում. հաստատվել են «Սևան» և «Դիլիջան» ազգային պարկերի (2007թ.) և «Խոսրովի անտառ» արգելոցի (2009թ.) կառավարման պլանները
- Ենթակառուցվածքի զարգացում. ԲՀՊՏ-ների վարչական շենքերի վերանորոգում և կահավորում, ճանապարհների կառուցում և վերանորոգում և այլն
- Տեխնիկական աջակցություն ԲՀՊՏ-ներին. սարքավորումներ, փոխադրամիջոցներ և այլն
- Սևանա լճի ջրով ծածկված ափամերձ տարածքների մաքրում և այլն

Տեղեկությունների համար դիմել.

ՀՀ բնապահպանության նախարարություն
ՀՀ, Երևան 0010, Կառավարության 3-րդ տուն
Էլ. փոստ. info@mnp.am
Հեռ.(+374 10) 52 10 99
Ֆաքս. (+374 10) 58 54 69
Ինտ. կայք. www.mnp.am

Սկզբնաղբյուր. ՀՀ բնապահպանության նախարարություն

PUBLIC FUNDING TO SPECIALLY PROTECTED NATURE AREAS OF ARMENIA

Specially protected nature areas (SPNA) have always been in the focus of the Government of Armenia as one of the main means of biodiversity protection envisaged by the UN Convention on Biological Diversity. The Ministry of Nature Protection of the Republic of Armenia (RA) is the authorized state body in the field of management, protection and use of SPNAs in Armenia.

During recent years lots of activities were implemented in the field of SPNAs by the public funding. The public funding to SPNAs has been continuously increasing. It should be mentioned that since 2000 the public funding for SPNAs at national level increased more than 5 times.

Some main ongoing activities and those implemented during recent years by public funding include:

- Establishment of new SPNAs: Khor Virap Sanctuary (2007), Gilan Sanctuary (2007), Arpi Lake and Arevik National Parks (2009), Zangezur Sanctuary (2009)
- Development of draft governmental decisions on establishment of new SPNAs: Jermuk and Gnishik National Parks, Kirants and Vorotan State Sanctuaries
- Adoption of the new Law on SPNAs (2006) and development and approval of by-laws
- Clarification of SPNAs borders and mapping
- Approval of the list of natural monuments (2008), approval of the plan (2010-2012) for adding new natural monuments to the approved list, clarification of the buffer zone borders and delineation of plots
- Development and approval of SPNAs management plans: approved management plans for Sevan and Dilijan National Parks (2007) and Khosrov Forest Reserve (2009)
- Infrastructure development: renovation and furnishing of SPNAs administrative buildings, road construction and renovation, etc.
- Technical support: equipment, vehicles, uniforms, etc.
- Cleaning of Lake Sevan shore-line due to water level raise and others

Contact information:

RA Ministry of Nature Protection
3 Government Bld., 0010 Yerevan, Armenia
E-mail: info@mnp.am
Tel: (+374 10) 52 10 99
Fax: (+374 10) 58 54 69
URL: www.mnp.am

Source: RA Ministry of Nature Protection



ՆՈՐՎԵԳԻԱՅԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ, ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ԳԱՂԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Ծրագիր. «Կենսաբազմազանության պահպանություն և համայնքային զարգացում. Հարավային Հայաստանում էկոտարածաշրջանի բնապահպանական պլանի նպատակների իրականացում»

Ծրագրի իրականացնող. ԲՀՀ Հայաստան, ԲՀՀ Նորվեգիա

Տևողություն. 2007 – 2010թթ.

Բյուջե. մոտ € 300.000 տարեկան

Նպատակ. աջակցել Հարավային Հայաստանում կենսաբազմազանության արդյունավետ պահպանության և բնական պաշարների կայուն կառավարման ապահովմանը՝ տրամադրելով այնպիսի գործառնական մոդել, որը կնպաստի զարգացմանը, բարեկեցությանն ու խաղաղությանը Կովկասի տարածաշրջանում

Հիմնական գործողություններ.

- «Խոսրովի անտառ» և «Շիկահող» արգելոցներում այցելուների ծրագրերի մշակում և իրականացում և այցելուների կենտրոնների ստեղծում
- «Շիկահող» արգելոցի կառավարման պլանի մշակում
- «Շիկահող» արգելոցում խոշոր կաթնասունների մոնիթորինգի ծրագրի մշակում և իրականացում
- Հարավային Հայաստանի գյուղերում իրազեկության բարձրացման ծրագրի իրականացում
- Կովկասյան ընձառյուծի 2008 – 2010թթ. տեղեկատվական քարոզարշավի ռազմավարության մշակում և իրականացում
- Համայնքային զարգացման ծրագրերի իրականացում՝ կենսաբազմազանության պահպանությանը նպաստող տնտեսական խթանների ստեղծման և կենսառեսուրսների կայուն օգտագործման նպատակով
- Արգելոցներում ենթակառուցվածքների հզորացում («Շիկահող» արգելոցի վարչական շենքի վերանորոգում, անտառապահի տնակի կառուցում և այլն)
- Ինտերնետային կայքերի (www.khosrov.am և www.shikahogh.am), գովազդային վահանակների, ճանապարհային ցուցանակների, բրոշյուրների, վավերագրական ֆիլմերի և այլ նյութերի ստեղծում
- Հզորությունների ստեղծում (անձնակազմի ուսուցում, սարքավորումների, փոխադրամիջոցների, համազգեստի տրամադրում և այլն)
- Նոր պահպանվող տարածքների ստեղծում և այլն

Տեղեկությունների համար դիմել.

ԲՀՀ Հայաստան
ՀՀ, Երևան 0010, Սարմենի 96
Էլ. փոստ. ikhorozyan@wwfcaucasus.am
Հեռ/ֆաքս. (+374 10) 52 47 12; 54 61 56
Ինտ. կայք. www.panda.org/armenia

Սկզբնաղբյուր. ԲՀՀ Հայաստան

NORWEGIAN GOVERNMENT, MINISTRY OF FOREIGN AFFAIRS

Project: Biodiversity Protection and Community Development: Implementing Ecoregional Conservation Plan Targets in South Armenia

Implementing organizations: WWF Armenia, WWF Norway

Duration: 2007 – 2010

Investment: about € 300,000 annually

Objective: to help ensure effective protection of biodiversity and sustainable management of natural resources in southern Armenia, providing an operational model that can contribute to development, prosperity and peace in the Caucasus region

Main activities:

- Development and implementation of visitor programs and construction of visitor centers in Khosrov Forest and Shikahogh Reserves
- Preparation of the management plan of Shikahogh Reserve
- Development and implementation of large mammal monitoring program in Shikahogh Reserve
- Awareness-raising program in villages of southern Armenia
- Development and implementation of leopard campaign strategy for 2008-2010
- Implementation of community development projects to create economic incentives for biodiversity conservation and sustainable use of bioresources
- Strengthening infrastructure in reserves (rehabilitation of administration building of Shikahogh Reserve, construction of ranger station, etc.)
- Capacity building (staff trainings, provision of equipment, cars, uniforms, etc.)
- Creation of websites (www.khosrov.am, www.shikahogh.am), production of billboards and road signs, leaflets, documentaries and others
- Establishment of new protected areas and others

Contact information:

WWF Armenia
96 Sarmeni St., 0010 Yerevan, Armenia
Email: ikhorozyan@wwfcaucasus.am
Tel/Fax: (+374 10) 52 47 12; 54 61 56
URL: www.panda.org/armenia

Source: WWF Armenia

ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ԴԱՇՆՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ (KFW ՀԱՐԳԱՑՄԱՆ ԲԱՆԿ)

Ծրագիր. «Էկոտարածաշրջանի բնապահպանական ծրագիր Հարավային Կովկասում. Հայաստանի Ջավախքի (Աշոցքի) շրջանում պահպանվող տարածքների ստեղծում»

Ծրագրի իրականացնող. ԲՀՀ Գերմանիա, ԲՀՀ Հայաստան և ԲՀՀ Կովկասյան ծրագրային գրասենյակ ասոցիացիա

Պայմանագրի կողմ. ՀՀ բնապահպանության նախարարություն՝ ներկայացված KfW Զարգացման բանկով

Տևողություն. 2007 – 2010թթ.

Բյուջե. €2.200.000

Նպատակ. պահպանել Հայաստանում Ջավախք-Շիրակ բարձրավանդակի յուրահատուկ կենսաբազմազանությունը՝ Վրաստանի և Թուրքիայի հետ սահմանի վրա, և միևնույն ժամանակ նպաստել Շիրակի մարզում համայնքային կայուն զարգացմանը՝ «Արփի լիճ» ազգային պարկի (ԱՊ) ստեղծման և մոտ 20 գյուղերում աջակցության գոտու ծրագրի իրականացման միջոցով

Հիմնական գործողություններ.

- «Արփի լիճ» ԱՊ-ի (մոտ 25.000 հա) և երեք արգելավայրերի («Ախուրյանի կիրճ», «Արդենիս» և «Ալվար» խոնավ տարածքներ՝ 2.000 հա) ստեղծում
- Աջակցության գոտու ծրագրի մշակում և մասնակի իրականացում՝ 14 համայնքներում տեղական բնակչության ապրելու միջոցների բարելավման նպատակով
- Ինտեգրված տարածքային հողօգտագործման պլանավորում
- Արփի լճի, Ախուրյան գետի և դրանց հետ կապված խոնավ տարածքների և աղբյուրների ջրային պաշարների կառավարման բարելավում
- Մարզային խորհրդատվական խորհրդի ստեղծում և գործունեություն՝ տեղական համայնքների, տեղական ՀԿ-ների, մարզային և կենտրոնական լիազոր մարմինների միջև երկխոսության բարելավման նպատակով
- Դաշտային գույքագրումներ, հետազոտություններ և գնահատումներ՝ երկրատեղեկատվական համակարգի ստեղծմամբ
- Տուրիզմի զարգացման գործողություններ (այցելուների կենտրոն, գովազդային վահանակներ, տեղեկատվական կետեր, ճամբարատեղեր և այլն)
- Մասնակցային կառավարման պլանավորում
- ԱՊ-ի ենթակառուցվածքի զարգացում
- ԱՊ-ի անձնակազմի ուսուցում
- Աջակցություն Հայաստանի և Վրաստանի միջև անդրսահմանային համագործակցությանը

Federal Ministry
for Economic Cooperation
and Development

kfw
ENTWICKLUNGSBANK

WWF

Տեղեկությունների համար դիմել.

Ծրագրի իրականացման գրասենյակ (ԾԻԳ)
ՀՀ, Գյումրի 377514, Ֆրունզեի փ. 148
էլ. փոստ. asantrosyan@wwfcaucasus.am
Հեռ/ֆաքս. (+0312) 356 92
Ինտ. կայք. www.lakearpi-nationalpark.com

ԲՀՀ Հայաստան
ՀՀ, Երևան 0010, Սարմենի 96
էլ. փոստ. office@wwfcaucasus.am
Հեռ/ֆաքս. (+374 10) 52 47 12; 54 61 56
Ինտ. կայք. www.panda.org/armenia

Սկզբնաղբյուր. ԲՀՀ Հայաստան

GERMAN GOVERNMENT (KFW DEVELOPMENT BANK)

Project: Ecoregional Conservation Programme in the Southern Caucasus Region: Establishment of Protected Areas in Armenia's Javakhq (Ashotsk) Region

Implementing organization: Association of WWF Germany, WWF Armenia and WWF Caucasus Programme Office

Contracting party: RA Ministry of Nature Protection, represented by KfW

Duration: 2007 – 2010

Investment: € 2,200,000

Objective: to conserve the unique biodiversity of the Javakheti-Shirak plateau in Armenia on the border to Georgia and Turkey at the same time enhancing sustainable rural development in the northern Shirak region through establishment of the Arpi Lake National Park (NP) and implementation of a support zone program, targeting around 20 villages

Main activities:

- Establishment of Arpi Lake NP (about 25,000 ha) and three associated Nature Sanctuaries (Akhuryan Gorge, Ardenis & Alvar wetlands; together 2,000 ha)
- Development and partial implementation of a support zone program for 14 communities to improve local livelihoods
- Integrated spatial land use planning
- Improved water management of the Lake Arpi, Akhuryan River and associated wetlands, and local water springs

- Establishment and functioning of a Regional Advisory Council to improve the dialogue between local communities, local NGOs, regional and national authorities
- Field inventories, surveys and assessments, with GIS data entry
- Tourism development activities (visitor centre, billboards, information points, camp sites, etc.)
- Participatory management planning
- NP infrastructure development
- NP staff training
- Facilitation of transboundary cooperation between Armenia and Gerogia

Federal Ministry
for Economic Cooperation
and Development

kfw
ENTWICKLUNGSBANK

WWF

Contact information:

Project Implementation Unit (PIU)
148 Frunze St., 377514 Gyumri, Armenia
Email: asantrosyan@wwfcaucasus.am
Tel/Fax: (+0312) 352 92
URL: www.lakearpi-nationalpark.com

WWF Armenia
96 Sarmeni St., 0010 Yerevan, Armenia
Email: office@wwfcaucasus.am
Tel/Fax: (+374 10) 52 47 12; 54 61 56
URL: www.panda.org/armenia

Source: WWF Armenia

ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ԴԱՇՆՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ (KFW ՀԱՐԳԱՅԱՆ ԲԱՆԿ)

Federal Ministry for Economic Cooperation and Development

Ծրագիր. «Անդրսահմանային միացյալ քարտուղարություն (ԱՄՔ) Հարավային Կովկասի համար» (իրականացվում է Հայաստանում, Վրաստանում և Ադրբեջանում)

Ծրագրի իրականացնողներ. ÖBf Consulting (Ավստրիա), GITEC Consult (Գերմանիա)

Տևողություն. 2007 – 2010թթ.

Բյուջե. մոտ € 300,000 (Կովկասի երեք երկրների համար)

Նպատակ. աջակցել երեք Կովկասյան երկրների՝ Հայաստանի, Վրաստանի և Ադրբեջանի միջև համագործակցությանը կենսաբազմազանության պահպանության ոլորտում՝ Գերմանիայի կառավարության Կովկասյան նախաձեռնության շրջանակներում

Հիմնական գործողություններ.

- Աջակցել տարածաշրջանում երեք նոր ազգային պարկերի ստեղծմանը (ներառյալ Հայաստանում «Արփի լիճ» ազգային պարկը)՝ ուսուցումների, տարածաշրջանում լավագույն պրակտիկայի ուղեցույցերի և այլ գործողությունների միջոցով
- Աջակցել երեք երկրներում կենսոլորտային արգելոցների ստեղծմանը՝ ծրագրի տարածքներում փոխանցելով գիտելիքներ հայեցակարգի, օրենսդրական և ինստիտուցիոնալ պահանջների մասին, ինչպես նաև իրականացնելով նախապատրաստական ուսումնասիրություններ
- Աջակցել գիտելիքների և փորձի փոխանակմանն երեք երկրների միջև, ինչպես նաև դրանց և այլ երկրների միջև՝ տարածաշրջանային աշխատանքային հանդիպումների և ուսուցողական այցերի կազմակերպման միջոցով
- Աջակցել բնապահպանության ինտեգրմանը տարածքային և հողօգտագործման պլանավորման գործընթացներում, օրինակ՝ երեք երկրներում լանդշաֆտային պլանավորման փորձարկման միջոցով
- Աջակցել Կովկասի պահպանվող տարածքների հիմնադրամին և դրան դիմող նախարարություններին՝ օգնելով ծրագրերի ընտրության և ծրագրային առաջարկների մշակման գործում, ինչպես նաև կազմակերպելով ուսուցումներ ՊՏ-ների բիզնես պլանավորման ոլորտում

Տեղեկությունների համար դիմել.

ԱՄՔ Հայաստան
Հայաստան, Երևան 0019, Բաղրամյան 3
էլ. փոստ. agevorgyan@jointsecretariat.org
Հեռ/ֆաքս. (+374 10) 56 38 22
Ինտ. կայք. www.jointsecretariat.org

ԱՄՔ տարածաշրջանային գրասենյակ
Վրաստան, Թբիլիսի, Քութաթելաձե փ.10
էլ. փոստ. mgarfoth@jointsecretariat.org
Հեռ/ֆաքս. (+995 32) 91 31 93
Ինտ. կայք. www.jointsecretariat.org

Սկզբնաղբյուրներ. ԱՄՔ տարածաշրջանային գրասենյակ և ԱՄՔ Հայաստան, http://www.jointsecretariat.org

GERMAN GOVERNMENT (KFW DEVELOPMENT BANK)

Project: Transboundary Joint Secretariat (TJS) for the Southern Caucasus (implemented in Armenia, Georgia and Azerbaijan)

Implementing organizations: ÖBf Consulting (Austria), GITEC Consult (Germany)

Duration: 2007-2010

Investment: about € 300,000 (for three Caucasus countries)

Objective: to facilitate cooperation in the field of biodiversity conservation between the three Caucasus Countries - Armenia, Georgia and Azerbaijan - in the framework of the German Government's Caucasus Initiative

Main activities:

- Facilitate the establishment of three new national parks in the region, including Arpi Lake National Park in Armenia, through trainings, regional best practice guidelines and others
- Support to the establishment of biosphere reserves in the three countries by transferring knowledge about the concept and the legal and institutional requirements and preparatory studies in the project areas
- Facilitate the sharing of knowledge and experience between the three countries and with other countries through regional workshops and study tours
- Support to embedding nature protection in spatial and land use planning, for example through piloting of landscape planning in the three countries
- Support to the Caucasus Protected Areas Fund and applicant ministries, for example by assisting with the selection of projects and preparation of proposals, and arranging trainings in PA business planning

Contact information:

TJS Armenia
3 Baghramyan Ave., 0019 Yerevan, Armenia
Tel/Fax: (+374 10) 56 38 22
Email: agevorgyan@jointsecretariat.org
URL: http://www.jointsecretariat.org

TJS Regional Office
10 Kutateladze St., Tbilisi, Georgia
Tel: (+995 32) 91 31 93
Email: mgarforth@jointsecretariat.org
URL: http://www.jointsecretariat.org

Sources: TJS Regional Office and TJS Armenia; http://www.jointsecretariat.org

ԳԼՈԲԱԼ ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ (ԳԷՀ)

Ծրագիր. «Հայաստանում պահպանվող տարածքների համակարգի զարգացում»

Ծրագրի իրականացնող. ՄԱԶԾ հայաստանյան գրասենյակ

Իրականացնող գործընկեր. ՀՀ բնապահպանության նախարարություն

Տևողություն. 2009-2013թթ.

Բյուջե. $ 1.000.000

Նպատակ. նպաստել արգելավայրերի ընդլայնմանը՝ ապահովելով Հայաստանի ԲՀՊՏ-ների ներկա համակարգում էկոհամակարգերի ավելի լավ ներկայացվածությունը և կենսաբազմազանության ավելի լավ պահպանությունը

Հիմնական գործողություններ.

- Վերանայել ԲՀՊՏ-ների օրենսդրական դաշտը և մշակել ԲՀՊՏ-ների մասին օրենքից բխող ենթաօրենսդրական ակտեր
- Վերանայել ինստիտուցիոնալ կապերը՝ հստակեցնելով արգելավայրերի ղեկավարման և կառավարման դերերը և պատասխանատվությունները
- Ստեղծել 3 նոր արգելավայրեր՝ ԲՀՊՏ-ների համակարգում քիչ ներկայացված ապրելավայրերում
- Մշակել արգելավայրերի կառավարման նոր մոդել
- Իրականացնել ուսուցողական ծրագրեր արգելավայրերի կառավարողների և տեղական համայքների համար
- Մշակել կառավարման և գործարար ծրագրեր 3 արգելավայրերի համար և աջակցել դրանց իրականացմանը
- Փաստագրել քաղած դասերը և կրկնօրինակել փորձը

Տեղեկությունների համար դիմել.

ՄԱԶԾ հայաստանյան գրասենյակ
ՀՀ, Երևան 0010, Մելիք Ադամյան 14
էլ.հասցե. armen.martirosyan@undp.org
Հեռ/ֆաքս. (+374 10) 56 60 73
Ինտ. կայք. www.undp.am

Սկզբնաղբյուր. ՄԱԶԾ հայաստանյան գրասենյակ

GLOBAL ENVIRONMENTAL FACILITY (GEF)

Project: Developing the Protected Area System of Armenia

Implementing organization: UNDP Armenia Country Office

Executing partner: RA Ministry of Nature Protection

Duration: 2009-2013

Investment: $ 1 million

Objective: to catalyze the expansion of the nature reserves to provide better representation of ecosystems within Armenia's current protected area system and enable active conservation of biodiversity

Main activities:

- Legal review with development of by-laws to operationalize the Law on SPNAs
- Re-configuration of institutional links to clarify roles and responsibilities for governance and management of sanctuaries
- Establishment of three new sanctuaries at underrepresented habitats
- Development of a new PA management model for sanctuaries
- Implementation of national and local training programs for sanctuary managers and local communities
- Development and support to implementation of management and business plans at three sanctuaries
- Documentation of the lessons learned and replication of the experience

Contact information:

UNDP Armenia Country Office
14 Melik Adamyan St., 0010 Yerevan, Armenia
Email: armen.martirosyan@undp.org
Tel/Fax: (+374 10) 56 60 73
URL: www.undp.am

Source: UNDP Armenia Country Office

ԳԼՈԲԱԼ ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ (ԳԷՀ)

Ծրագիր. «Աջակցություն Հայաստանի պահպանվող տարածքների համակարգի ֆինանսական կայունությանը»

Ծրագրի իրականացնող. ՄԱԶԾ հայաստանյան գրասենյակ

Իրականացնող գործընկեր. Կովկասի պահպանվող տարածքների հիմնադրամ (ԿՊՏՀ), ՀՀ բնապահպանության նախարարություն

Տևողություն. 7 տարի (հաստատումը սպասվում է 2010թ-ին)

Բյուջե. $ 1.000.000

Նպատակ. ապահովել Հայաստանի ԲՀՊՏ-ների համակարգի երկարաժամկետ ֆինանսական կայունությունը

Հիմնական գործողություններ.

- Ապահովել Հայաստանում ԲՀՊՏ-ների համակարգի մեծ մասի երկարաժամկետ ֆինանսական կայունությունը ԿՊՏՀ-ի գործունեության միջոցով, ներառյալ Հայաստանի համար նոր ստեղծված և 7 տարվա ընթացքում օգտագործվելիք հիմնադրամը
- Առնվազն 25%-ով բարձրացնել կառավարման արդյունավետությունն առնվազն 10 ԲՀՊՏ-ներում (հիմնականում ԲՊՄՄ I և II կատեգորիաների), որտեղ կան գլոբալ վտանգված և էնդեմ տեսակներ
- Օպտիմալացնել ԲՀՊՏ-ների կառավարման ծախսերը՝ նկատի ունենալով մի կողմից տարածքների կառավարման և գործարար ծրագրերի նպատակները և մյուս կողմից համակարգում առկա միջոցները

Տեղեկությունների համար դիմել.

ՄԱԶԾ հայաստանյան գրասենյակ
ՀՀ, Երևան 0010, Մելիք Ադամյան 14
էլ.հասցե. armen.martirosyan@undp.org
Հեռ/ֆաքս. (+374 10) 56-60-73
Ինտ. կայք. www.undp.am

Սկզբնաղբյուր. ՄԱԶԾ հայաստանյան գրասենյակ

GLOBAL ENVIRONMENTAL FACILITY (GEF)

CAUCASUS PROTECTED AREAS FUND

Project: Catalyzing Financial Sustainability of Armenia's Protected Areas System

Implementing organization: UNDP Armenia Country Office

Executing partner: Caucasus Protected Areas Fund (CPAF), RA Ministry of Nature Protection

Duration: 7 years (upon approval envisaged in 2010)

Investment: $ 1 million

Objective: to secure long-term financial sustainability of the Armenian PA system

Main activities:

- Secure long-term financial sustainability of the majority of the PA system in Armenia through operation of the CPAF, including a newly constituted Armenia-dedicated seven-year sinking fund
- Raise cost-effectiveness of site management by at least 25% on at least 10 PAs (focusing on IUCN Categories I and II) harboring globally threatened and endemic biodiversity
- Optimize PAs management costs in light of site-specific management and business plan objectives on the one hand, and resources available system-wide on the other

Contact information:

UNDP Armenia Country Office
14 Melik Adamyan St., 0010 Yerevan, Armenia
Email: armen.martirosyan@undp.org
Tel/Fax: (+374 10) 56-60-73
URL: www.undp.am

Source: UNDP Armenia Country Office

ԳԼՈԲԱԼ ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ (ԳԷՀ)

Ծրագիր ԿԲԿ-ի Պահպանվող տարածքների վերաբերյալ աշխատանքների ծրագրի իրականացման համար երկրների գործողություններին աջակցող ՄԱԶԾ/ԳԷՀ ծրագրերի շրջանակում

Ծրագրի իրականացնող. ՄԱԶԾ հայաստանյան գրասենյակ

Իրականացնող գործընկեր. ՀՀ բնապահպանության նախարարություն

Տևողություն. 2009-2011թթ.

Բյուջե. $ 129.000

Նպատակ. արծագանքել Հայաստանի ԲՀՊՏ-ների համակարգում առկա գիտելիքների, կառավարման, հզորությունների և օրենսդրական բացերին

Հիմնական գործողություններ.

- էկոլոգիական բացերի վերլուծություն և առաջարկությունների մշակում
- Համայնքի կողմից կառավարվող ԲՀՊՏ-ների մոդելների և դրանց աջակցող օրենսդրության մշակում
- Հզորությունների զարգացման և ուսուցողական ծրագրերի մշակում և իրականացում

Տեղեկությունների համար դիմել.

ՄԱԶԾ հայաստանյան գրասենյակ
ՀՀ, Երևան 0010, Մելիք Ադամյան 14
էլ.հասցե. armen.martirosyan@undp.org
Հեռ/ֆաքս. (+374 10) 56 60 73
Ինտ. կայք. www.undp.am

Սկզբնաղբյուր. ՄԱԶԾ հայաստանյան գրասենյակ

GLOBAL ENVIRONMENTAL FACILITY (GEF)

Project in the framework of UNDP/GEF Supporting Country Action on the CBD Programme of Work on Protected Areas

Implementing organization: UNDP Armenia Country Office

Executing partner: RA Ministry of Nature Protection

Duration: 2009 - 2011

Investment: : $ 129,000

Objective: to cover the key knowledge-related, governance, capacity and legal gaps in Armenia's PA system

Main activities:

- Ecological gap analysis and development of proposals
- Models of community managed SPNAs and development of supporting legislation
- Development and implementation of capacity building and training programs

Contact information:

UNDP Armenia Country Office
14 Melik Adamyan St., 0010 Yerevan, Armenia
Email: armen.martirosyan@undp.org
Tel/Fax: (+374 10) 56 60 73
URL: www.undp.am

Source: UNDP Armenia Country Office

ԳԼՈԲԱԼ ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ (ԳԷՀ)

Ծրագիր. Բնական պաշարների կառավարման և չքավորության նվազեցման ծրագիր (ԲՊԿՉՆԾ), ֆինանսավորվել է Համաշխարհային բանկի կողմից

Ծրագրի բաղադրիչ 3. Կենսաբազմազանության պահպանության և պահպանվող տարածքների կառավարման բաղադրիչ, ֆինանսավորվել է ԳԷՀ-ի կողմից

Ծրագրի իրականացնող. ՀՀ բնապահպանության նախարարության «Բնական պաշարների կառավարման և չքավորության նվազեցման ծրագրի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկ

Տևողություն. 2002 - 2009 թթ.

Բյուջե (բաղադրիչ 3). $ 3.480.000

Ծրագրի նպատակ. որդեգրել բնական պաշարների կառավարման կայուն գործառույթներ և նվազեցնել գյուղական չքավորությունը ծրագրի տարածքում, որտեղ բնական պաշարների քայքայումը հասել է վտանգավոր աստիճանի: Ծրագիրն օգնել է նաև կանխարգելել բնական պաշարների հետագա քայքայումը և կայունացնել տեղական համայնքների եկամուտները:

Ծրագրի 3-րդ բաղադրիչն ուղղված էր «Սևան» և «Դիլիջան» ազգային պարկերի (ԱՊ) հզորացմանը, դրանց կենսաբազմազանության պահպանությանը, արդյունավետ օգտագործման ուղիների մշակմանը, կադրերի վերապատրաստմանը և մասնագիտական որակավորման բարձրացմանը, հասարակության էկոլոգիական-լուսավորչական աշխատանքների իրականացմանը:

3-րդ բաղադրիչի հիմնական գործողությունները.

- «Սևան» և «Դիլիջան» ԱՊ-երի կառավարման պլանների նախագծերի մշակում
- «Սևան» և «Դիլիջան» ԱՊ-երի մոնիթորինգի համակարգի ստեղծում
- «Սևան» և «Դիլիջան» ԱՊ-երի նյութատեխնիկական կարողությունների հզորացում. փոխադրամիջոցներ, դաշտային և գրասենյակային սարքավորումներ և այլն
- «Սևան» և «Դիլիջան» ԱՊ-երի ենթակառուցվածքի հզորացում. վարչական շենքերի կառուցում/վերանորոգում, կահավորում, այցելուների կենտրոնի կառուցում և այլն
- ԲՀՊՏ-ներին առնչվող օրենսդրության կատարելագործում. ԲՀՊՏ-ների մասին նոր օրենքի նախագծի մշակում (ընդունվել է 2006թ-ին) և ենթաօրենսդրական ակտերի նախագծերի մշակում
- Ուսուցումներ (ԱՊ-երի անձնակազմ և այլն)
- Իրազեկության բարձրացում (համայնքներ, ՀԿ-ներ, լրատվամիջոցներ և այլն)

Տեղեկությունների համար դիմել.

ԲՊԿՉՆԾ ՕԻԳ
ՀՀ, Երևան 0047, Արմենակյան 129
Էլ. փոստ: nrmprp@web.am
Հեռ./Ֆաքս. (+374 10) 65 16 41; 65 16 31
Ինտ. կայք. www.mnp.am

Սկզբնաղբյուր. ՀՀ ԲՆ ԲՊԿՉՆԾ ՕԻԳ

GLOBAL ENVIRONMENTAL FACILITY (GEF)

Contact information:

NRMPRP PIU
129 Armenakyan St., 0047 Yerevan, Armenia
E-mail: nrmprp@web.am
Tel/Fax: (+374 10) 65 16 41; 65 16 31
URL: www.mnp.am

Source: NRMPRP PIU of the RA Ministry of Nature Protection

Project: Natural Resources Management and Poverty Reduction Project (NRMPRP) (was financed by the WB)

Project component 3: Improved Management of Protected Areas and Biodiversity Conservation (was financed by GEF)

Implementing organization: "Natural Resources Management and Poverty Reduction Project Implementation Unit" state entity of the RA Ministry of Nature Protection

Duration: 2002 – 2009

Budget (component 3): $ 3.48 mln

Project objective: to promote adoption of sustainable natural resource management practices and rural poverty alleviation in the project area, where degradation of natural resources has reached a critical point. The project helped also to prevent further deterioration of the natural resource base and stabilize incomes in the local communities that depend on these resources

Component 3 was aimed at strengthening of Sevan and Dilijan national parks (NP), protection of their biodiversity, development of the ways of sustainable use, staff training, public awareness raising, etc.

Main activities of Component 3:

- Development of draft management plans for Sevan and Dilijan NPs
